Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society

# 2011 տարեկան զեկույց

# 2011 annual report

## Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջավային շարժման հիմնարար սկզբունքները

## Fundamental Principles of the Red Cross and Red Crescent International Movement

# Մարդասիրություն
**Humanity**

# Անկողմնակալություն
**Impartiality**

# Չեզոքություն
**Neutrality**

# Անկախություն
**Independence**

# Կամավորություն
**Voluntary service**

# Եզակիություն
**Unity**

# Համընդհանրություն
**Universality**

the power of humanity





Արդեն 92 տարի է, ինչ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը իրականացնում է իր մարդասիրական գործունեությունը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ հանդիսանալով օժանդակ կառույց կառավարությանը մարդասիրական ոլորտում: Հավատարիմ լինելով Կարմիր խաչի միջազգային շարժման սկզբունքներին՝ Ազգային ընկերությունը 2011 թվականին շարունակել է իր լայնածավալ գործունեությունը բազմաթիվ ոլորտներում ինչպիսիք են՝ սոցիալ-առողջապահական, աղետներին նախապատրաստման և արձագանքման, բնակչության տեղաշարժի, առաջին օգնության, որոնման և ընտանեկան կապերի վերամիավորման, հիմնարար սկզբունքների և մարդասիրական արժեքների տարածման, երիտասարդական և այլն: Սույն տարեկան զեկույցում Դուք կարող եք գտնել և տեղեկանալ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից 2011 թվականի ընթացքում իրականացված գործունեությանը և արձանագրված նվաճումներին:

Այսօր՝ 21րդ դարում, մարդկությանը բաժին է հասել ծանր ժամանակահատված՝ արհավիրքներ, պատերազմներ, տնտեսական ծանր ճգնաժամեր: Աշխարհում տիրող այս խառնաշփոթում հաճախ մոռացվում և անտեսվում են մարդը: Մարդասիրությունն է, մարդասիրական արժեքներն են, որ պետք է լինեն աշխարհի շարժիչ ուժը: Այս առումով յուրաքանչյուր ոք ունի իր անելիքի չափաբաժինը, որի համար կոչ եմ անում մեր հասարակությանը համախմբել ուժերը՝ խոցելի խմբերին սատարելու և նրանց խնդիրներին արձագանքելու համար:

Եզրափակելով, ցանկանում ենք հայտնել շնորհակալական խոսքեր բոլոր«կարմիրխաչականների»ևբարերարկազմակերպություններին և անձանց, որոնց օգնությամբ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը իրականացնում է իր մարդասիրական առաքելությունը՝ ի բարօրություն մարդկությանը:

It is already 92 years, that the Armenian Red Cross Society carries out its humanitarian activities throughout Republic of Armenia being auxiliary to the government in humanitarian field. Being adherent to the principles of the Red Cross and Red Crescent International Movement the National Society continued its large-scale activities in different spheres, such as social and health care, disaster preparedness and response, population movement, first aid, tracing service and restoring of family links, dissemination of humanitarian principles and values, youth, etc. In the current annual report you can find and be informed on implemented ARCS activities and recorded achievements in 2011.

Today, in the 21st century, human being is facing a hard period of time: disasters, wars, severe economic crisis occur. A human being goes forgotten and unnoticed in this chaos. Humanity and humanitarian values must be the motivating and power of change for the world. In this regard, everyone has its role to play. Therefore, I call upon the public to mobilize our power to support the vulnerable groups and respond to their problems and needs.

Concluding, we would like to express gratitude to all the dedicated to red cross people and benefactors with support of whom the Armenian Red Cross Society is implementing its humanitarian mission on behalf and welfare of our beneficiaries.



***Մխիթար Մնացականյան***
*Նախագահ*
***Mkhitar Mnatsakanyan***
*President*

***Աննա Եղիազարյան***
*Գլխավոր քարտուղար*
***Anna Yeghiazaryan***
*Secretary General*



**Հայկական Կարմիր Խաչի Ընկերությունը** (ՀԿԽԸ) հիմնադրվել է 1920թ. մարտի 19-ին **Սպանդարատ Կամսարականի** կողմից:

**The Armenian Red Cross Society** (ARCS) was founded on March 19, 1920 by **Spandarat Kamsarakan**.

## ՀԿԽԸ կայացման ուղին

Կարմիր Խաչի մարդասիրական առաքելությունը Հայաստանում դրսևորվել է 1877թ., երբ Ֆիննական Կարմիր Խաչի դաշտային հոսպիտալները հիմնվեցին Երիվան նահանգում, ինչպես նաև 1896թ., երբ Ամերիկյան Կարմիր Խաչի կամավոր Կլարա Բարտոնը օգնություն է ցուցաբերում Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող աղետի մատնված հայ ազգաբնակչությանը:

## Review of ARCS foundation

The Humanitarian Mission of red Cross in Armenia started in 1877, when field hospitals of the Finnish Red Cross were established in Erivan region, as well as in 1896, when Clara Barton, a volunteer of the American Red Cross was assisting heavily suffering Armenian population in Osmanian Turkey.

| | | |
|---|---|---|
| ՀՀ Պառլամենտը վավերացրեց ՀԿԽԸ կանոնադրությունը | **1920** | The Parliament of RA ratified the Statutes of ARCS |
| ՀԿԽԸ ժամանակավոր դադարից հետո վերսկսեց գործունեությունը | **1921** | The activities of ARCS were resumed after temporary cancellation |
| Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի որոշմամբ շարունակվեց ՀԿԽԸ գործունեությունը և վերահաստատվեց կանոնադրությունը | **1922** | The activities of ARCS were resumed and its Statutes was re-approved by the Government of Armenian Soviet Socialist Republic |
| ՀԿԽԸ դարձավ ԽՍՀՄ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների դաշինքի անդամ | **1925** | ARCS became a member of the Alliance of Red Cross and Red Crescent Societies of USSR |
| ՀԿԽԸ 14-րդ համագումարում ՀԿԽԸ հռչակվեց որպես ՀՀ գործող Կարմիր Խաչի միակ ազգային ընկերություն | **1992** | ARCS was declared as the only National Society in the country during the 14th session of General Assembly of ARCS |
| ՀՀ-ում բացվեց ՀԿԽԸ «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնը | **1992** | Gratsia International Rehabilitation Center of ARCS was established in RA |
| ՀՀ միացավ 1949թ. Ժնևի 4 Կոնվենցիաներին և դրա 1977թ. առաջին և երկրորդ Լրացուցիչ արձանագրություններին | **1993** | RA ratified the Geneva Conventions of 1949 and its first and second Additional Protocols of 1977 |
| ՀԿԽԸ ճանաչվեց ՀՀ նախագահի հրամանագրով | **1993** | ARCS was recognized by the RA Presidents statement |
| ՀԿԽԸ ճանաչվեց Կարմիր Խաչի Միջազգային կոմիտեի կողմից որպես 166-րդ ազգային ընկերություն | **1995** | ARCS was recognized by the International Committee of the Red Cross and the 166th National Society |
| ՀԿԽԸ դարձավ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միջազգային ֆեդերացիայի անդամ | **1995** | ARCS was admitted to the International Federation of Red Cross and Red Crescent Societies as its full member |
| Սոլֆերինո նահանգի Կարմիր խաչի թանգարանում տեղադրվեց ՀԿԽԸ հուշաքարը | **1997** | ARCS memorial plate was placed in the Red Cross Museum of Solferino |
| Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 13-րդ Համագումարում ՀԿԽԸ-ն երկու տարի ժամկետով ընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ | **2001** | ARCS was elected as member of Organizational Development Commission by the 13th session of IFRC General Assembly |
| ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Կարմիր խաչի և Կարմիր մահիկի խորհրդանշանների գործածության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը | **2002** | The National Assembly of RA adopted law on the use and protection of Red Cross and Red Crescent emblems |
| Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 14-րդ համագումարում ՀԿԽԸ-ն վերընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ | **2003** | ARCS was re-elected as a member of Organizational Development Commission by the 14th session of IFRC General Assembly in Geneva |
| Սեուլում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ Համագումարում ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց Երիտասարդական հանձնաժողովի անդամ | **2005** | ARCS Youth Department was elected as a member of Youth Commission during the session of IFRC General Assembly in Seoul |
| Ավստրայում կայացած Եվրոպական համագործակցության համաժողովի ժամանակ ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց որպես կոորդինացման կոմիտեի անդամ | **2005** | ARCS Youth Department was elected as a member of Coordination Committee by European Coordination Committee in Austria |
| Աթենքում կայացած հանդիպման ժամանակ ՀԿԽԸ Աղետների կառավարման բաժինն ընդգրկվեց Եվրոպական ԿՄ և ԿՄ ԱԸ-ների սոցիալ-հոգեբանական աջակցության ցանցում | **2006** | ARCS Disaster Management and Population Movement Department was included as a member in European RC/RC NSs Network for Psychological Support during the meeting in Athens |
| ՀՀ միացավ Ժնևի կոնվենցիանեի 2005թ. 3-րդ լրացուցիչ արձանագրությանը | **2011** | RA ratified the third Protocol to Geneva Conventions of 2005 |

## ՀԿԽԸ Առաքելությունը

Նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ: Նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են ազգաբնակչության խոցելիության պատճառ դառնալ: Ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

## Նպատակը

Կազմակերպության հիմնական նպատակն է կանխարգելել և թեթևացնել մարդկային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասսայական, սեռային, հոգևոր դասակարգային պատկանելությունից և քաղաքական հայացքներից:

## Նախագահ

Մխիթար Մնացականյան

## Գլխավոր քարտուղար

Աննա Եղիազարյան

## Պատվավոր նախագահ

Աշոտ Սարգսյան

## Պատվավոր անդամներ

| | |
|---|---|
| Ռիտա Փարսադանյան | ՀԿԽԸ նախագահ 1975-1991թթ. |
| Պիեռ Միշո | Ֆրանսիական Կարմիր խաչ |
| Գերհարդ Մայեր | Գերմանական Կարմիր խաչ |
| Դերենիկ Դումանյան | ՀՀ առողջապահության նախարար |
| Գագիկ Մարտիրոսյան | ՀՀ Պետնախարար |
| Գուֆար Կուրմաև | Ռուսական Կարմիր Խաչ, փրկարար |
| Հարություն Եսոյան | ՀԿԽԸ փրկարար |
| Վալերի Վարդանյան | ՀԿԽԸ փրկարար |
| Կլաուս Հիկե | Բավարական Կարմիր խաչ |
| Մայքլ Ուիբել | Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային կազմակերպություն |
| Կառլ Շայդե | քահանա, Գթության խոհանոց ծրագրի ղեկավար |

## Բարերարի կոչում շնորհված կազմակերպություններ

Կապանի Դենո Գոլդ Մայնինգ Քամփնի ՓԲԸ
Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային կազմակերպություն

## Ընդհանուր տեղեկություններ

| | |
|---|---|
| Մարզային մասնաճյուղ | 11 |
| Տարածքային մասնաճյուղ | 3 |
| Համայնքային մասնաճյուղ | 52 |
| Աշխատակիցներ | 70 |
| Անդամներ | 3000 |
| Կամավորներ | 3200 |
| «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն | 1 |
| Բարեգործական ճաշարան | 3 |
| Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոն | 1 |
| Հյուրանոցային համալիր | 1 |
| Տարածաշրջանային բազա | 1 |
| Ուսումնական կենտրոն | 1 |

## ARCS Mission

To reduce vulnerability of the population through mobilization of the power of humanity. To be prepared to cope with situations, which may cause vulnerability among the population. To provide essential support by assisting people made vulnerable by harsh socioeconomic conditions.

## Goal

The overall goal of the Society is to prevent and alleviate human sufferings regardless of nationality, race, sex, religious, beliefs, class and political opinions.

## President

Mkhitar Mnatsakanyan

## Secretary General

Anna Yeghiazaryan

## Honorary President

Ashot Sargsyan

## Honorary Members

| | |
|---|---|
| Rita Parsadanyan | ARCS President throughout 1975-1991 |
| Pier Michaud | French Red Cross |
| Gerhard Mayer | German Red Cross |
| Derenik Dumanyan | Minister of Health, RA |
| Gagik Martirosyan | State Minister, RA |
| Gaphur Kurmayev | Russian Red Cross, rescuer |
| Harutyun Yesoyan | ARCS rescuer |
| Valeri Vardanyan | ARCS rescuer |
| Claus Heike | Bavarian Red Cross |
| Michael Uibel | German Red Cross Baden-Wurttemberg Provincial Branch |
| Karl- Heinz Scheide | Priest, Coordinator of Soup Kitchen program |

## Benevolent organizations

Deno Gold Mining Company
German Red Cross Baden-Wurttemberg Provincial Branch

## Overview

| | |
|---|---|
| Regional Branches | 11 |
| Territorial Branches | 3 |
| Community Branches | 52 |
| Employees | 70 |
| Members | 3000 |
| Volunteers | 3200 |
| Gratsia International Rehabilitation Centre | 1 |
| Charity kitchens | 3 |
| First Aid Training Methodological Centre | 1 |
| Hotel Compound | 1 |
| Regional Warehouse Base | 1 |
| Training Centre | 1 |



# ՍՈՑԻԱԼ-ԱՌՈՂ-ՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայականական Կարմիր խաչի ընկերությունը, նպատակ ունենալով նվազեցնել սոցիալապես անապահով մարդկանց խոցելիությունը և բարելավել ազգաբնակչության առողջական վիճակը, լայնածավալ գործունեություն է ծավալում ազգաբնակչությանը սոցիալ-առողջապահական ոլորտում աջակցություն տրամադրելու ուղղությամբ:

# HEALTH AND CARE

With the purpose of decreasing social vulnerability of the people in need, as well as improving health of conditions of people, the Armenian Red Cross Society implements large-scale activities providing social and health care support to population.

## Սոցիալական ծրագրեր

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացնում է մի շարք սոցիալական ծրագրեր՝ ուղղված միայնակ ծերերի, նացիոնալ-սոցիալստների վոհերի, հանրակացարանաբնակ և առավել կարիքավոր ծնողազուրկ երեխաների սոցիալական իրավիճակի բարելավմանը:
Աշխատանքները իրականացվել են մի շարք ոլորտներում՝ ազգաբնակչության սոցիալական վիճակի ուսումնասիրում, սոցիալական ծառայությունների մատուցում՝ սննդամթերքի, հագուստի բաշխում, հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում:
ՀԿԽԸ կողմից անց է կացվել «Հայաստանում նախկին նացիոնալ-սոցիալիստների վոհերի սոցիալ-հոգեբանական և բժշկական խնամք» ծրագիրը, որը ֆինանսավորվել է Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության և գերմանական «Հիշողություն, Պատասխանատվություն, Ապագա» հիմնադրամի կողմից: Ծրագրում ընդգրկվել են 96 շահառուներ Երևանից, Վանաձորից, Տավուշի մարզի 13 բնակավայրերից:
Շահառուները ծրագրի շրջանակներում ստացել են հոգեբանական աջակցություն, բժշկական խնամք, իսկ ամսեկան մեկ անգամ էլ՝ սնունդ, բժշկի նշանակմամբ դեղամիջոցներ, հագուստ, հիգիենիկ պարագաներ:
Նորվեգական, Ճապոնական Կարմիր խաչերի, Գերմանական ԿԽ Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության ֆինանսավորմամբ Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց Ձորի, Արագածոտնի, Տավուշի, Լոռու մարզերում սոցիալական բաժնի կամավորների միջոցով իրականացվել են 210 միայնակ տարեցների տնային խնամք ու փոքր վերանորոգման աշխատանքներ, բաշխվել են սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ:
Երիտասարդական Կարմիր Խաչի (ԵԿԽ) ՄՄ/ՏՄ 40 կամավորներ ներգրավված են եղել «Սոցիալ-հոգեբանական ծառայություն փախստական ծերերին» ծրագրում, որի շրջանակներում տարվա ընթացքում նրանք այցելել են 400 միայնակ ծերերի՝ տրամադրելով սնունդ և հիգիենիկ պարագաներ՝ կազմակերպելով զանազան սոցիալական և մշակութային միջոցառումներ:
«Ժպիտների ակումբ» ծրագրի շրջանակներում հանրակացարանաբնակ ընտանիքների 90 երեխաների համար կամավորների կողմից կազմակերպվել է բազմաբնույթ դասընթացներ, ժամանցային և սպորտային միջոցառումներ, ամառային վրանային ճամբարներ: Ծրագրում առանձնահատուկ տեղ են գրավում հանրակացարանաբնակ երեխաների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ դասընթացներին մասնակցած նրանց հասակակից դպրոցականների համար կազմակերպած էքսկուրսիաները, որոնք շփման և ինտեգրման մեծ հնարավորություն ընձեռեցին երեխաներին:
Շուրջ 18 առավել կարիքավոր ծնողազուրկ երեխաներ շարունակում են եռամսյակային դրամական նպաստ ստանալ Լիոնի «Հայ Կարմիր Խաչի օգնության կոմիտեի» կողմից: Նրանց համար կամավորների ուժերով ամռանը կազմակերպվել է վրանային ճամբար:

---

## Social Programs

ARCS implements a number of social programs directed at improvement of lonely elderly people, victims of National Socialism, children living in dormitories and social conditions of the most vulnerable orphans.
Social activities have been carried out in different spheres such as investigating social conditions of population, provision of social services, food, medicines, clothing, psychological and counseling support.
ARCS continued implementation of Psychosocial and Medical support to National Socialism in Armenia program with funding of Baden Wurttemberg Provincial Branch of the German Red Cross and "Memory, Responsibility, Future" German foundation (Stiftung "Erinkerung, Verantwortung und Zukunft"). In the frames of the program 96 beneficiaries from Yerevan, Vanadzor and 13 communities of Tavush region were included.
In the frames of the program beneficiaries were distributed parcels of food, medicaments prescribed by doctors, hygiene supplies on a monthly basis, psychological support as well as nurse care.
With funding of Norwegian, Japanese RCs, German RC Baden-Wurttemberg Provincial branch volunteers carried out home care and little repair works to 210 lonely elderly people in Armavir, Shirak, Vayots Dzor, Aragatsotn, Tavush, Lori regions of RA. Food and hygiene parcels have also been distributed to them.
40 volunteers of regional and territorial branches of Red Cross Youth (RCY) has been involved in the Psycho-Social Support to Elderly Refugee People program within the framework of which the volunteers visited 400 lonely elderly people during a year, providing them with food and hygienic parcels, as well as organizing a number of social and cultural events.
Volunteers of another social project Smiley Club have organized various kinds of educational sessions, entertaining and sports events, as well as summer tent camps for 90 children living in dormitories. A special place is given to excursions organized for the children living in dormitories and schoolchildren who have passed HIV/AIDS prevention courses in different schools. These excursions give a great opportunity to the vulnerable children to socialize with their peers and to integrate into the society.
About 18 orphan children continue receiving quarterly financial support from Lyon Branch of the Committee for Support to the Armenian Red Cross. With the participation of the volunteers, summer tent camps were organized for the children.







Սոցիալական ոլորտում ամենատարբեր սոցիալական ծառայություններ են մատուցվել ավելի քան 770 շահառուի:



In the social sphere more than 770 beneficiaries were provided with different social services.

## ՀԿԽԸ գործունեությունը տուբերկուլոզի ոլորտում

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ակտիվ գործունեություն է ծավալում առողջապահության ոլորտում: Այս բնագավառում տուբերկուլոզի ոլորտում ՀԿԽԸ 2011 թ. ընթացքում իրականացրել է կանական ծրագրեր, ինչպիսիք են՝ Կանգնեցնել ԲԴԿ ՏԲ Հայաստանում և Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության ծառայություններ ծրագրերը:

Կանգնեցնել ԲԴԿ ՏԲ Հայաստանում ծրագրի շրջանակներում Երևանի 3 պոլիկլինիկաներում ամսական միջինը 30 ԴԿ ՏԲ հիվանդների տրամադրվել է սոցիալ-հոգեբանական աջակցություն՝ սննդային և հիգիենիկ փաթեթների տեսքով, ինչպես նաև հոգեբանական խորհրդատվություն հիվանդներին և նրանց ընտանիքի անդամներին:

2011թ ՀԿԽԸ ընդլայնել է իր գործունեությունը ՏԲ ոլորտում՝ իրականացնելով «Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագիրը, որը կազմում է ՏԲ Ազգային ծրագրի մասը: Ծրագիրը ֆինանսավորվում է Գլոբալ Հիմնադրամի կողմից, որի ռեցիպիենտը հանդիսանում է Առողջապահության Նախարարությունը, իսկ սուբ-ռեցիպիենտը՝ՀԿԽԸ:

**Ծրագիրը իրականացվում է հետևյալ ուղղություններով.**

**1.** ՏԲ հիվանդներին սոցիալական աջակցության կազմակերպում ՀՀ մարզերում և Երևան քաղաքում,սննդային և հիգիենիկ փաթեթների տրամադրում,

**2.** ԴԿ ՏԲ հիվանդնրի սոցիալական աջակցության տրամադրում,

**3.** ՏԲ հիվանդների ուսուցողական միջոցառումների իրականացում՝ բուժման նկատմամբ հետևողականության բարձրացման նպատակով,

**4.** Խորհրդատուների աշխատանքային խմբի միջոցով աշխատանքների կազմակերպում՝ բուժման նկատմամբ հետևողականության բարձրացման նպատակով,

**5.** Դեղորայքի ընդունում՝ անմիջական վերահսկողության տակ (DOT),

**6.** Հիվանդների համար կրթական և խորհրդատվական սեմինարների կազմակերպում:

---

## The ARCS activities in the sphere of Tuberculosis

During 2011, the Armenian Red Cross Society implemented the following multifold activities in the sphere of tuberculosis, such as Social Support to TB Patients and Stop MDR TB in Armenia programs.

Within the frames of Stop MDR TB in Armenia program  30 MDR TB patients under the outpatient phase of treatment  were targeted in 3 policlinics of  Yerevan. During the program implementation these 30 MDR patients were provided with psycho-social support, conferences were organized , elaborating and printing disseminating materials were printed and distributed.

In 2011 ARCS widened its activities in the sphere of TB by implementing Social support to TB patients program, which is a part of TB National program. The program is financed by the Global Fund whose recipient is the Ministry of Health and sub-recipient is ARCS.

**The program is implemented in the following directions:**

**1.** Organization of  psycho-social support in Yerevan and RA regions, provision of  food and hygienic parcels

**2.** Provision of social assistance to MDR TB patients

**3.** Implementation of the educational programs for TB patients with the purpose of increasing the treatment adherence

**4.** Organization of activities through concealing with the purpose of increasing the treatment adherence

**5.** Direct Observed Treatment (DOT)

**6.** Organization of educational and advisory seminars for TB patients.




**Տուբերկուլոզի կանխարգելմանն ուղղված ծրագրերում ընդհանուր առմամբ ընդգրկվել են 2560 ռեգուլյար և 449 ԲԴԿ ՏԲ հիվանդներ:**

**In general 2560 regular and 449 MDR TB patients were included in the programs directed at prevention of Tuberculosis.**

## ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում

2011թ. ևս ՀԿԽԸ Գլոբալ հիմնադրամի, Անդորրայի Կարմիր խաչի և ԱՄՆ խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ շարունակեց իրականացնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված մի շարք ծրագրեր: «Կողմնորոշվելու ժամանակն է» ծրագրի շրջանակներում Երևանում և ՀՀ այլ մարզերում կազմակերպվեցին մի շարք հանրային միջոցառումներ, ինչպես օրինակ, բաց դասեր, կինոդիտումներ, թոք-շոուներ, քարոզարշավներ, մոմավառության երթեր, համերգներ և այլն: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող միջազգային օրերին սոցիալական ցանցերում տեղադրվեց և բջջային կարճ հաղորդագրություններ ուղղարկվեցին ՎիվաՍելլ-ՄՏՍ բջջային օպերատորի բաժանորդներին: Անդորրայի Կարմիր խաչի աջակցությամբ Երևանում և ՀՀ 3 մարզերում մեկնարկել է «Երիտասարդներն ընդդեմ ՁԻԱՀ-ի» ծրագիրը, որը նախատեսում է կազմակերպել հավասարը հավասարին մեթոդով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ դասընթացներ դպրոցականների համար, ինչպես նաև պլանավորվում է կազմակերպել հանրային միջոցառումներ:
ՀՀ-ում ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման գործընթացից նոր թափ հաղորդեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի Բջջային Կարճ Հաղորդագրության տեղեկատվական գծի գործարկումը: Ծրագիրը իրականացվում է ԱՄՆ խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ և Orange Armenia և ՎիվաՍելլ-ՄՏՍ բջջային օպերատորների աջակցությամբ: Ծրագրի շնորհիվ Orange և VivaCell-MTS բջջային օպերատորների բոլոր բաժանորդները հնարավորություն ունեն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրներին առնչվող իրենց հուզող հարցն անանուն ուղղել տրամադրված 6428 կարճ համարին (1 SMS-ի արժեքն է 0 դրամ) և 24 ժամվա ընթացքում ստանալ ճշգրիտ ու հակիրճ պատասխան՝ պատրաստված ՀԿԽԸ երիտասարդ կամավորների կողմից: Ծրագրի իրականացման առաջին ամիսներին ստացել ենք մոտ 17 000 հարց:
ՄԻԱՎ-ի նվազեցումը Լոռու մարզի ԹՆՕ-երի շրջանում ծրագրի շրջանակներում Վանաձոր քաղաքում 116 ԹՆՕ-ներ ստանում են միանգամյա օգտագործման ներարկիչներ, պահպանակներ, ալկոհոլային խծուծներ և խորհրդատվություն ու կամավոր խորհրդատվության և տեստավորման ուղեգրում:
ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում ծրագիրն իրականացվում է Վանաձոր քաղաքում 15-23 տարեկան երիտասարդության և ուսանողության շրջանում: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են դասընթացներ հավասարը հավասարին հիմունքով ուսանողների համար: Երիտասարդներին տրամադրվում են տեղեկավական նյութեր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ,ինչպես նաև ապահովվում է խորհրդատվություն՝ այցելության և հեռախոսազանգի միջոցով:

## HIV/AIDS prevention

In 2011 ARCS continued implementing a number of HIV prevention programs financed by the Global Fund, Andorra Red Cross and the US Peace Corps Armenia. Within the Time for Choice program a number of public events (open classes, film-watching, talk-shows, campaigns, candle-lit processions, concerts, etc.) were organized in Yerevan and regions of RA. On HIV/AIDS related World days information about HIV/AIDS was placed on social networks, as well as SMS with relevant information were sent to the subscribers of VivaCell-MTS mobile operator. With the support of Andorran Red Cross Society the Youth against AIDS program started in Yerevan and in 3 regions of RA. By using the peer education method, the project suggested sessions about HIV/AIDS for schoolchildren. Public events are also planned to be held.
The launch of the SMS information helpline program gave a new rise to the increase of public awareness concerning HIV/AIDS and its prevention in RA. ARCS and the US Peace Corps have initiated the SMS information helpline program in cooperation with VivaCell-MTS and Orange Armenia mobile operators. Due to the program the subscribers of Orange Armenia and VivaCell-MTS mobile operators have the opportunity to send questions about HIV/AIDS anonymously to the special short number 6428 (1 SMS costs 0 AMD) and within 24 hours the trained young volunteers give a brief and accurate response to the questions of the subscribers. About 17.000 questions were received within the first months of the implementation of the program. An important achievement of the program was the prize given in the framework of the Youth Award in the category of Bridging The Digital Divide- Connecting People through Technologies. The Award was organized by the International Federation of Red Cross/Red Crescent every two years.
HIV Prevention among IDUS in Lori Marz program was aimed at reducing the vulnerability of IDUs towards HIV, Hepatitis and other blood borne and sexually transmitted infections. The project was designed to include 90 beneficiaries but during 2011 the number of beneficiaries reached up to 116. Within the framework of the program VCT, legal ,social- psychological counseling are being realized. Within the frames of the program the beneficiaries get disposable syringes, alcoholic pads and condoms.
Within the framework of the programme HIV prevention in Armenia the aim is to decrease the vulnerability among youth aged 15-23/students towards HIV/AIDS. A counseling centre was established in the ARCS Vanadzor office aimed at increasing access of youth aged 15-23/students to VCT has been functioning ensured by a volunteer from the mentioned office.
Within the frames of the program peer to peer educators' seminars were organized for the young students as well as QuA sessions were organized for the teaching staff. The young students were provided with the informative materials on HIV/AIDS, as well as they were provided with counseling though calls and visits.




Ընդհանուր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերի շրջանակներում 200 երիտասարդ կրթվել են հավասարը-հավասարին սկզբունքով, 6000 երտասարդ ուսանողներ (15-23 տարիքային սահմաններում) համալսարաններում և քոլեջներում կրթվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ, ինչպես նաև Վանաձոր քաղաքի համալսարանների և քոլեջների 120 դասախոսական կազմ «Հարց և Պատասխան» սեմինարների միջոցով կրթվել և լուսաբանվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ:

In general within the programs directed at HIV/AIDS prevention 200 young peer educators were disseminated, 6000 youth in the universities and colleges were trained and disseminated on HIV/AIDS, and 120 teaching staff of universities and colleges got the Q&A sessions on HIV topics.

## ՀԿԽԸ գործունեությունը հեպատիտի ոլորտում

«Հոֆֆմանն-Լյա Ռոշե» ՍՊԸ-ի հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցությամբ Երևան քաղաքում 2011 թվականի սեպտեմբերի 2-ին Բժշկական համալսարանի շրջակայքից մինչև Երիտասարդական մետրո ձգվող տարածքում` Աբովյան փողոցի երկայնքով կազմակերպվել և անցկացվել է հանրության իրազեկվածության մակարդակը բարձրացնող ակցիա` նվիրված Հեպատոլոգիայի միջազգային օրվան: Բժշկական համալսարանի շրջակայքում տեղադրվել է տաղավար, որի վրա դրված են եղել հեպատիտներ B,C-ն լուսաբանող տպագրանյութերը, իսկ վերևում փակցվել է հեպատիտների դեմ պայքարի կարգախոսը կրող պաստառ: ՀԿԽԸ 20 կամավորները, որոնք նախապես կրթվել են հեպատիտներ B, C թեմայով, հանրությանը բաժանել են հեպատիտներ B, C-ն լուսաբանող տպագրանյութերը: Ակցիան լուսաբանվել է մի շարք տեղային հեռուստա և ռադիո լրատվամիջոցների կողմից (Շանթ հեռուսաընկերություն, Երևան, 12, Արմնյուզ հեռուստաընկերություն, Ռադիո Վան), ինչպես նաև լուսաբանվել է մի շարք ինտերնետային կայքերի միջոցով (www.epress.am, www.hetq.am, www.aysor.am, www.panorama.am, www.news.am, www.internettv.am, www.politnew.am, www.ankakh.com, (Նոյան Տապան) www.nt.am):

## Առողջ ապրելակերպ

2011թ. ընթացքում ՀԿԽԸ և Աշտարակ Կաթ ՓԲԸ հետ համագործակցությամբ մեկնարկել է «Առողջ Սերունդ» ծրագիրը, որի նպատակն է դպրոցականներին իրենց իսկ միջավայրում տեղեկացնել, խրախուսել և հնարավորություն տալ ճիշտ ընտրություն կատարել իրենց առողջության և ապրելակերպի վերաբերյալ` հավասարը հավասարին մեթոդով կազմակերպվող դասընթացների միջոցով: Դասընթացները ներառում են առողջ սնունդ և սննդակարգ, առանց ծխախոտ և ալկոհոլ, զբաղվենք սպորտով և շրջակա միջա-վայրի պահպանություն թեմաները: Յուրաքանչյուր դասընթացի ավարտին մասնակից դպրոցականների ուժերով կազմակերպվել են բնապահպանական էքսկուրսիաներ և այլ միջոցառումներ:

---

## The ARCS activities in the sphere of Hepatitis

In 2011, the Armenian Red Cross Society with the collaboration of "HOFFMANN-LA ROCHE LTD", representation in Armenia on September 2 "International Hepatology Days in Yerevan" along the Abovyan street from the Medical University to the Metro Eritasardakan organized a public awareness-raising campaign. There was placed a booth, on which were placed the printing materials on the Hepatitis B, C and also there was a wallpaper carrying the message of the day. ARCS 20 volunteers which have been trained beforehand on Hepatitis B, C distributed the printing materials among the public. The campaign was disseminated by local radio and TV channels like Shant TV, Yerevan, 12 TV, Arm News TV, Radio Van, as well as through the following internet sites: (www.epress.am, www.hetq.am, www.aysor.am, www.panorama.am, www.news.am, www.internettv.am, www.politnew.am, www.ankakh.com, www.nt.am).

## Healthy Lifestyle

In 2011, ARCS in collaboration with Ashtarak Kat CJSC has started a project Healthy Generation. By using the peer education method, the project aims at informing, encouraging and giving a chance to schoolchildren to make the right choice concerning their health and lifestyle. The courses involved the following themes: healthy food and nutrition, no smoking and no alcohol, going in for sports and protecting the environment. At the end of each session ecological excursions and other events were organized with the efforts of the schoolchildren.







# ՀԿԽԸ «ԳՐԱՑԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈ-ՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են՝ ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժում, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնումը, հիվանդների մասնագիտական ուսուցումը, սոցիալ-հոգեբանական վերականգնումը, սանատոր-կուրորտային բուժումը:

# "GRATSIA" INTERNATIONAL REHABILITATION CENTER OF THE ARCS

The main activity areas of the Center are treatment of marrow, spinal cord, musculoskeletal diseases, general and post-traumatic rehabilitation, patients vocational training, psychosocial rehabilitation and sanatorium-and-spa treatment.

2011թ. կենտրոնը շարունակել է իր համագործակցությունը ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և ԱՄՆ-ի դեսպանատան հետ: Համագործակցության նպատակն է օգնել Իրաքի հայ փախստականներին՝ տրամադրելով կենտրոնի հնարավորությունները:
Ողնուղեղի և ողնաշարի վնասվածքով յուրաքանչյուր հիվանդի հետ աշխատում է առանձին բժիշկ, բույժքույր, վերականգնող թերապևտ, հոգեբան և սպորտային մարզիչ:
Կենտրոնն ունի ընդլանված ստացիոնար և ամբուլատոր բժշկական ծառայություններ՝ ախտորոշում, ջրաբուժություն, ջրային մերսում, ցեխաբուժություն/տորֆաբուժություն, կինեզոթերապիա, ֆիզիոթերապևտիկ բուժում, բուժական և դասական մերսում, էլեկտրաթերապիա, ինհալացիոն բուժումներ, ասեղնաբուժություն սպորտային համալիր, սթրեսոլոգի կաբինետ, «ՍԿԷՆԱՌ» բաժանմունք:
2012թ. նորացվել, ընդլայնվել և վերազինման է ենթարկվել ՄՎԿ-ի ջրացեխաբուժարանը և աղիների լվացման բաժանմունքը, որը թույլ է տալիս բարձրացնել պացիենտների սպասարկման որակը, պրոցեդուրաների անցկացումը դնել բարձր մակարդակի վրա: Բարեփոխումները դրական են ազդել, թե պրոֆեսիոնալ անձնակազմի, և թե պացիենտների բարոյահոգեբանական մակարդակի վրա:
Իր գործունեության ընթացքում կենտրոնում արդեն բուժվել և իրենց առողջությունն են վերականգնել մոտ 10000 հիվանդներ ՀՀ-ից, ԱՊՀ-ից, Եվրոպայից և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներից: Կենտրոնում տարեկան կտրվածքով բուժում են ստանում 900-1000 հաշմանդամ, 280 վետերան, 5 փախստական, մոտ 526 սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչներ:
Կատարվում են նաև դիսպանսեր տնային այցելություններ հաշվառման վերցրած ողնաշարի և ողնուղեղի վնասվածքով հաշմանդամ հիվանդներին՝ ցուցաբերելով բժշկական օգնություն և հետազոտում:
Կենտրոնի «Փարոս» երգչախումբը և բասկետբոլի «Կլիկիա» թիմը պարբերաբար մասնակցում են սահմանափակ կարողությունների տեր մարդկանց համար տարբեր երկրներում կազմակերպվող համերգներին և մրցումներին՝ տուն վերադառնալով բարձր գնահատականների արժանացած:
Կենտրոնը գլխավորում է բժիշկ և ադմինիստատոր Ալեքսանդր Մնացականյանը:

---

The Center continued co-operation with United Nations High Commissioner for Refugees and US Embassy in 2011. The goal of the co-operation is to support Armenian refugees from Iraq, offering Centers opportunities.
In the Center each patient with marrow and spinal cord injuries is individually treated and cared by a doctor, nurse, rehabilitation therapist, psychologist and sport trainer.
The Center has broadened inpatient and outpatient rehabilitation services-diagnostics, hydropath, hydro massage, mud cure/peat cure, kinesitherapy, physiotherapy procedures, medical and classical massage, electrotherapy, inhalation therapy, acupuncture, sport complex, stressologists room, SKENAR Department.
In 2012 IRC hydrotherapeutic mud-bath and intestine-cleaning was updated, expanded and re-equiped, which allow to increase the quality of patient care and carry out the procedures on a high level. The change has positively affected both the professional staff and patients psychological level.
During its activities about 10000 patients from RA, CIS countries, from a number of European and Middle East countries have already received treatment and rehabilitation in the Center. During the year, 900-1000 disabled people, 280 veterans, 5 refugees, about 526 socially vulnerable people are cured in the Center.
Dispensary home visits are also made to the registered disabled patients with spinal cord and marrow traumas, providing them with medical assistance and examination.
Pharos choir and Kilikia basketball team of the Center regularly participate in concerts and competitions organized for people with limited capacities in different countries and return with high appreciations.
The Center is lead by doctor and administrator Aleksandr Mnatsakanyan.


5 20 1 12 9 14 11 8 16 7 19 3 17 2






ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԹԻՄ

# ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ

# DISASTER MANAGEMENT AND POPULATION MOVEMENT

## Աղետների կառավարման ուղղություն

Աղետների կառավարման (ԱԿ) ուղղության հիմնական նպատակն է նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը բնական և տեխնածին աղետների նկատմամբ՝ համայնքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման միջոցով և հզորացնել Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) աղետների նախապատրաստման և արձագանքման (ԱՆԱ) համակարգը:
Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԽ և ԿՄ ՄՖ) աջակցությամբ և Նորվեգական Կարմիր խաչի ֆինանսավորմամբ 2011 թ-ին իրականացվեց երկու մինի ծրագրեր «Աղետներին նախապատրաստումը դպրոցներում» խորագրով: Ծրագրերի շահառուները Երևանի 9, ինչպես նաև ՀՀ Արմավիրի և Վայոց Ձորի մարզերի 6 դպրոցներն էին: Ծրագրերի շրջանակներում կազմակերպվեց «Աղետներին նախապատրաստում» խորագրով դասընթաց ՀԿԽԸ 40 կամավորների համար: Ինչպես նաև կազմակերպվեցին «Աղետներին պատրաստվածություն» թեմայով ուսուցողական սեմինարներ՝ շահառու դպրոցների վեցերորդ և յոթերորդ դասարանցիների մասնակցությամբ: Այնուհետև յուրաքանչյուր դպրոցում ուսուցանված աշակերտներից ձևավորվեց հինգ թիմ, որոնց համար կազմակերպվեցին լրացուցիչ դասընթացներ և «Մանկական վիկտորինա» խորագրով մրցույթ: Վերոնշյալ դպրոցների ութերորդ և իններորդ դասարանցիների համար կազմակերպվեցին «Երկրաշարժ» թեմայով սեմինարներ՝ ուղղված երեխաների իրազեկության և պատրաստվածության մակարդակի բարձրացմանը: Ավելին, կազմակերպվեցին «Երկրաշարժ» և «Տարահանման կազմակերպումը դպրոցներում» թեմաներով սեմինարներ շահառու դպրոցների ուսուցիչների համար: Նույն դպրոցներում կազմակերպվեցին նաև ուսուցողական տարահանումներ: Աղետների վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով տպագրվեցին նաև տեղեկատվական պաստառներ և բուկլետներ և բաշխվեցին բոլոր շահառու դպրոցներին:
ԱԸ-ը շարունակեց «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի իրականացումը, որը մեկնարկեց 2010թ-ի ապրիլ ամսին՝ 18 ամիս տևողությամբ: Ծրագիրը իրականացվեց Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության բաժնի, Դանիական և Իսլանդական Կարմիր խաչերի համաֆինանսավորմամբ և ԿԽ և ԿՄ ՄՖ օժանդակությամբ:

**Ծրագրի անցկացման համար, որպես թիրախ  ընտրվել էին Շիրակի մարզի ինը համայնքներ և 32 դպրոցներ:**

---

## Disaster Management direction

The main aim of Disaster Management (DM) direction is to reduce the vulnerability of the population towards natural and man-made disasters through disaster risk reduction on a community level and strengthen Disaster Preparedness and Response structure of the Armenian Red Cross Society (ARCS).
ARCS implemented two mini-projects titled Disaster Preparedness in Schools with the support of International Federation of Red Cross and Red Crescent Societies (IFRC) and funding by Norwegian Red Cross. The beneficiaries of the project were 9 schools from Yerevan and 6 schools from Armavir and Vayots Dzor regions. Within the framework of the project two days Disaster Preparedness training was organised for 40 ARCS volunteers. Also, Disaster Preparedness seminars were conducted for pupils of 6th and 7th grade from 15 targeted schools. Later, 5 teams were formed in each school for who additional educational seminars and Children Quiz contest have been conducted. Moreover, in the same schools special seminars titled Earthquake were organized for pupils from 8th and 9th grades in order to raise pupils awareness and level of preparedness. Also, special seminars on Earthquake and Evacuation were organized for teachers of targeted schools, after which evacuations from schools theoretically and practically have been conducted. In order to raise peoples awareness on disaster, educational posters, booklet and handbooks were printed and distributed to all targeted schools.
NS started the implementation of Building Safer Local Communities in South Caucasus project from April 2010 with 18 months duration. The project is co-funded by European Commission Humanitarian Aid Department (ECHO), Danish and Icelandic Red Cross in a consortium with the International Federation of Red Cross and Red Crescent Societies.
**Nine communities and 32 schools of Shirak region were selected as a target for the implementation of the project.**



**Ծրագրի գործողությունները բաժանվում էին հետևյալ 4 ուղղություններով՝**

1. Համայնքների աղետներին արձագանքման և ռիսկերի նվազեցման կարողությունների զարգացում

2. Բնակչության իրազեկման բարձրացում, հատկապես դպրոցներում աղետներին պատրաստվածության ուսումնական ծրագրերի միջոցով

3. Աղետների կառավարման ոլորտում մարզային համակարգման հզորացում

4. Հարավային Կովկասում աղետների կառավարման ոլորտում համագործակցության հզորացում:

**The project activities are conducted in the following four directions:**

1. Development of community capacities in disaster preparedness and response

2. Enhancement of public awareness through educational programs on Disaster Preparedness especially in schools

3. Enhancement of regional coordination in Disaster Management sphere

4. Enhancement of cooperation on Disaster Management in the South Caucasus

**Առաջին ուղղության** շրջանակներում հաշվետու տարում, որպես համայնքային թիմերի (ՀԹ) կարողությունների վարգացման հաջորդական փուլ, ԱԸ-ը կազմակերպեց «Աղետների ռիսկի կառավարման հիմունքներ», ինչպես նաև «ԼՈՌԷ» փրկարարական ջոկատ ՀԿ-ի հետ համատեղ «Փրկարարական հիմունքներ և առաջին օգնություն» թեմաներով տեսական և գործնական թարմացման դասընթացներ թիրախ 9 ՀԹ համար: Որպես դասընթացների ավարտական փուլ, կազմակերպվեցին երեք ուսումնական վարժանքներ տարբեր սցենարներով 9 ՀԹ-ի մասնակցությամբ: Դասընթացներին ներկա էին Արտակարգ իրավիճակների նախարարության Շիրակի մարզային փրկարար ծառայությունը, Շիրակի մարզի հրշեջ փրկարարական ջոկատը և շտապ օգնութնյունը, «ԼՈՌԷ» փրկարարական ջոկատ ՀԿ-ն, ինչպես նաև Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչներ և գյուղապետեր:

Ծրագրի **երրորդ ուղղության** շրջանակներում հաշվետու տարում կազմակերպվեց Շիրակի մարզային համակարգման հանձնաժողովի երկու հանդիպում: Ավելին, կազմակերպվեց «Աղետների ռիսկի նվազեցում», ինչպես նաև «ՀՀ աղետների կառավարման օրենսդրություն» թեմաներով դասընթացներ Շիրակի մարզային համակարգման հանձնաժողովի անդամների և այլ մարզային շահառուների համար:

